# ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

## Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐՒՈՅ

## ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՑ ՔԱՂԱՔԻՆ

(Շարունակութիւն)

### ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ. ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՑ

Յերկուց արտաքին անապատաց. լցա՛ւ քաղաքս մեր գազանաւք: Գազանք ի միջոյ լերանց, դստերք Հագարու յանապատէ՛: Գազանք ի դառագիղս, եւ գազանք ի մէ՛ջ վրանաց: Գազանք վայրենիք ի ըղբաւսան(1) քաղաքիս մտին, գազանք դըստերք Հագարու կորո՛ւստ քաղաքիս մտին: Ահա ածին արծակեցին զգազանս, եւ համարձակեցին թոյլ ետուն գազանացն: Գազանքն որ մտին ի լեռնէ, երկուս ի տարւոջ թէ քաջ կերակրեցին: Գազանք դստերք Հագարու, զամենայն որ երթայ եւ գայ, բեկանեն: Հեռաւորին մեղանչեն զարդուք(2), եւ մաւտաւորին պղծալի՛ց արգելմբք: Որ ետես ցանկացաւ, մեռա՛ւ ի ծածուկ: Որ մերձեցաւ, մեռա՛ւ յայտնի: Ո՛հ գազանք դստերք Հագարու որ լցին բեկմամբ զհրապարակս մեր: Գազան եթէ զերծանի փախնու, յորժամ տեսանէ քաղաք այս խռովի՛: Կատաղիքն սահին ընդ հրապարակս, եւ հաճեա՛լ է քաղաքս ընդ բեկումն իւր: Ուղիղ են մարդիկ առ յայտնիս, յետս ընդդէ՛մք առ ծածկեալս: Բած եթէ կատաղի կոչկոճէ՛ն: Զբոցս կատաղիս սիրեն եւ յարգեն. փախչին ի բերանոյ գազանաց, եւ մատնին ի ծոց քածից: Բոզանոցք լուռ են, զի կամեցեա՛լ են: Զգաստք լուռ են, զի չեն նախանձաւորք: Որ տեսանէ զչարս եւ ոչ քինայ, բաժանո՛րդ է ընդ գործեալսն: Գազանքն որ մտին ի լեռնէ, զրաւսո՛նք եղեն քաղաքիս: Պիղծքն որ մտին յանապատէ, անապա՛տ առնեն զքաղաքս: Գազանք լո՛ւռ են ի քաղաքի աստ: Պիղծքն կատաղեա՛լ են ի քաղաքիս: Կա՛յր կրակ աստէն ի գուստի, որ այրէր զմանկունս քաղաքիս: Զաղա՛ն բերին զկրակն Հագարու, ահա վառեալ է եւ չի՛ք շիջուցիչ:

Յաւզնականութիւն ածին զնոսա, ո՛չ ընդ աւգնականութիւն նոցա: Զմընաւն ի թիկունս մարմնոյ եդին, ահա սպանանե՛ն զհոգի եւ զմարմին: Կրակ յորում կամեցաք(1) ջեռնուլ, հուրացուցանէ՛ զմեզ ծուխ նորա: Ածին մեզ գերի մարմնոյ, եւ փոխեցին գերի՛ զոգիս մեր: Զնոսա չոգան գերեցին ծրի, կանայք նոցա պիղծք, գերեցի՛ն զմեզ վարձուք: Ո՛չ գերեցին արք նոցա որ չոգան, որպէս գերեցին զմեզ կանայք նոցա: Նոքա գերեցին զմողովս կանանց, կանայք գերեցին զխիղճս արանց: Խնդրեցէք զի ելցէ կրակն ի մէնջ, չա՛ռ է այրել(2) զմեզ մեր կրակն: Ելցէ ի միջոյ յարկաց մերոց, յանապատի՛ն իւրում երթիցէ վառեսցի: Տաչորեսցի յորդիս նոցա, բորբոքեսցի՛ յերիտասարդս նոցա: Զքաղաքս զոր քանդեաց բարկութիւն, ո՛չ էին ի նոսա չարիքն Հագարու: Եթէ սուրբ քաղաքքն քանդեցան, զի՞րդ ապրեսցի պըղծալիցս: Աբրահամ զլուխ արդարոց եհա՛ն զնոսա ի տանէ իւրմէ: Մեք մեղաւորք ժողովեցաք, զի գեղցի՛ չափ մեղաց մերոց: Սառայ հալածեաց զմայր նոցա, Մծբին ժողովեաց զդստերս նորա: Սառայ մայր արդարոցն եհա՛ն զցխոսն ի տանէ իւրմէ: Մծբին մայր պատերազմաց ժողովեաց զցխոս ի հրապարակս իւր: Եթէ զտունն Սառայի գերեցին հոսեցին, երկի՛ր Մծբին զի զուցէ զքեզ հոսեսցին: Գոն ի նոսա եւ հաճոյք զորս որսացա՛ւ ողորմութիւնն: Եւ վարդապետութիւնն իբրեւ զլուծ, եւ հնազանդեա՛ց զխոս յառաքարին: Յուստերաց եւ ի դստերաց Հագարու պաշտե՛ն զտէրն Աբրահամու: Անարգեցին զերկրպագութիւն հաւրն իւրեա՛նց, եւ ընտրեցին զհաւրն իւրեանց: Անարգեցին զարուսեակ, եւ ապաւինեցան ի ծագումն որ ծագեաց ի Սա-

(1) Թուի թէ գրչին վրիպակ փխկ. **գրաւսան**:

(2) Օր. ունէր **զարդեւք**, ուղղիչն դնէ ի լուսանցս՝ **-ուք**:

(1) Ի վերայ վանգին **ա՛ր** եդեալ է կապարեայ գրչաւ՝ **յ**, ըստ այսմ ընթեռնլի՝ **կամեցայք**:

(2) Օր. ունէր՝ **այրել**. ուղղիչն դնէ **Ե** ի վերայ:

digitised by A.R.A.R.@

հակայ։ Ի Հագարայ ծառայք են, յեկեղեցւոջ զազատութիւն առանան։ Սառայ հալածեալ զնոսա, ծագումն նորին ի նմանէ փրկեա՞ց զնոսա։ Զի ո՛չ ժառանգեցին ընդ Սահակայ([2]), ընդ տեառն Սահակայ ժառանգեցին։ Ի մարդ ծառայութիւն([3]) ծնեալ են, յեկեղեցւոյ յազատութի՛ւն ծնանին։ Մկրտութիւն ազատատոհմ, ծնանի զնոսա ազա՛տս։ Տեայլեալքն նոցա չե՛ք բառ։ Հաստատնոց նոցա չե՛ք համեմատ։ Եկին շառայլեալքն ի կորո՛ւստ մեզ։ Եկին հաստատունքն, ի կորու՛ստ մեր։ Եղեն մեզ վնասք պիղծք նոցա, եւ ի կշտամբութի՛ւնըս ցածունք նոցա։ Վերինք են եւ ներքինք, ո՛չ գոն ի նոսա միջինք։ Համօյք նոցա յերկինս, եւ ապականեալք նոցա յանդո՛ւնդս։

Հրապարակեաց (Շար.) Յ. Յ. Մ.

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԴՈՒՐԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆ

Ն. Վ. Պօղոս Փաշա Նուպար, պատուակալեալ Երկնին. Կղրնին. Ընձժղվի. Պատուակալ Նախագահ Գեր. Թորգոմ Սրբազանի նամակին, 500 Անգլիական ոսկի նուիրած է ի նպաստ Դուրեան Մատենադարանի շինութեան, շատ համակրալից գրութեամբ մը։

Դուրեան Յոբելեանի Կեդրոնական Յանձնաժողովին ուղղուած պաշտօնագրով մը կը հաղորդուի թէ Մանչէսթրի մէջ, Դուրեան Ղեւոնդ Սրբազանի նախագահութեամբ, կազմուած է Յոբելինական Մասնախումբ մը, որուն անդամներն են. Տիարք

Հրանդ Պագրճեան, Ատենապետ
Դաւիթ Ֆնտգլեան, Ատենադպիր
Մարքօ Պագրճեան, Գանձապետ

Մասնախումբը արդէն ձեռնարկած է հանգանակութեան, ի նպաստ Դուրեան Մատենադարանի շինութեան։

Քալիֆօռնիոյ Առաջնորդ Գարեգին Սրբազանի նախաձեռնութեամբ, մշակուած է Յայտագիր մը, տօնելու համար Դուրեան Յոբելեանը Քալիֆօռնիոյ Առաջնորդութեան երեք գլխաւոր քաղաքներուն մէջ, Ֆրէզնօ, Լօս-Անճէլէս եւ Սան-Ֆրանչիսկօ։

Տքթ. Վ. Թորգոմեան, Սրբազան Յոբելեարին պատանեկութեան գործակից ընկերը, Փարիզէն, Դուրեան Մատենադարանին նուիրեց 342 երեսնոց Ձեռագիր մը։

— **Օրէնք եւ սովորութիւնք Երուսաղեմի առնեղծեալք ի Պօղոսէ Վարդապետէ Մեղիքեանց Առաջնորդէ, բանիւ Աստուածաշունչ գրոց։**
Համառօտեալ խմակնութեամբ ի Նիկողայոսէ Արտօտեանց, որ երեւմն առաջի Երուսաղէմի, եւ յետոյ ուղղափառ ճանովէալքան. յաւելմամբ թղթոյ միոյ առ ձմօրէն ազգն Երուսաղեմի. թարգմանեալ յիտալացւոց լեզուէ ի հայ բարբառ, աշխատասիրութեամբ Հօր Իգնատիոսի վարդապետի. աշակերտէ Տեառն Մխիթարայ վարդապետի Աբբահայր կոչեցելոյ. յամի Տեառն 1760. խոլ բաս Հայոց թուականին ՌՄԹ. եւ անտի յերկուց օրինակաց անգելոյ գաղափարէ օրինակեալ արդէն ոմեմն ճոխութեան դպրի ի բաղձանս իւր, ի պատրիարգութեան Կոստանդնուպօլսոյ Տեառն Ստեփաննոսի Առնի եպիսկոպոսի։ Ի Խասգիւղ, յամի Տեառն 1834։

Պէրութի թեմին կաթողիկոսական փոխանորդ Գեր. Եղիշէ Եպս. Կարօեան, Ս. Աթոռոյ Մատենադարանին նուիրեց Չորս Ձեռագիրներ, Ատանայի եկեղեցիներէն մնացած յիշատակներ, մէկ Ճաշոց եւ երեք Աւետարան։

❁ Իրագի Կառավարութեան Առաջին Ելեմտագէտ-քննիչ (Chief Financer Inspector) Վսեմ. Ռոկան Պէյ Մարտիկեան, արձակուրդով Պաղտատէն Եւրոպա երթալու առթիւ, Երուսաղէմէն անցաւ եւ մնաց երեք օր (Մայիս 16-20)։ Երկիցս այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, մասնաւորապէս հետաքրքրուեցաւ Ընծայարանով եւ Ժառանգաւորաց Վարժարանով։ Լուսարարապետ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանի ընկերակցութեամբ տեսաւ Ս. Քաղաքին շրջականները ու պատմական եւ գլխաւոր վայրերը։ Ն. Սրբազնութիւնը՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն փոխադարձ այցելութիւն տուաւ Ռոկան Պէյի, Ալէնպի Օթէլին մէջ, եւ ողջերթ մաղթեց իրեն։

Հաճոյքով իմացանք որ Իրագի Վեհափառ Մէլիք Ֆէյսալ՝ Պէյութեան աստիճանը շնորհած է նորին Վսեմութեան։

❁ 25 Մայիս 1929, Շբ. երեկոյեան ժամը 3ին տեղի ունեցաւ քաղաքիս Անգլիկան Սէնթ-Ճօրճ վարժարանի Ըմբշամարտի հանդէսը, եւ 1 Յունիս Շաբաթ երեկոյեան ժամը 3ին բացուեցաւ նոյն Հաստատութեան տարեկան Պազարը։ Այս երկու հանդէսներուն ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Իսրայէլեան, ի դիմաց Պատրիարքարանին։

❁ 28 Մայիս 1929, Գշ. երեկոյեան ժամը 4.30ին, Պաղեստինի Բարձր Գոմիսէր Ն. Վ. Սըր Ճօն Ռօպըրթ Չէնսըլըր իր ապարանքին մէջ թէյասեղան

([2]) Բառըդ ընդ Սահակայ ի լուսանցս յաւելեալ ի ձեռն ուղղչին։
([3]) Թերեւս ուղղել՝ ի ծառայութիւն։

digitised by A.R.A.R.@